ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.04.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2020/97

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե

Մասնակից՝ «Անտարես» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման հարցում, տպագրական աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 03.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5019-2020 գրությամբ «Անտարես» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) 02.04.2020թ. թիվ 1/18-2/18681-2020 գրության հիման վրա, 03.04.2020թ.-ին «Անտարես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի 03.04.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/97 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

15.04.2020թ.-ին և 30.04.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 15.04.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.04.2020թ.-ին:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 02.04.2020թ. թիվ 1/18-2/18681-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար կազմակերպված ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/14 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի Հավելված 1-ում առկա էր անհամապատասխանություն: Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» N 526-Ն որոշման 41-րդ կետի (այսուհետ՝ կարգի) 27.03.2020թ-ին «Անտարես» ՍՊԸ-ին ծանուցվել է ներկայացնել հայտի շտկված փաստաթղթերը: Սահմանված ժամկետում շտկված փաստաթղթերը չեն ներկայացվել և կարգի 42-րդ կետի համաձայն հայտը մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել են «Անտարես» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու համար:

3. <u>«Անտարես» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 06.04.2020թ.-ի գրությամբ դիմել է «Անտարես» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5019-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 09.04.2020թ.-ին ներկայացրած գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույնով Բողոքներ քննող անձին ենք ներկայացնում վերոնշյալ հարցի առնչությամբ Ընկերության գրավոր կարծիքը՝ միաժամանակ հայտնելով, որ առարկում ենք Ընկերությանը Ցուցակում ներառելու դեմ՝ գտնելով, որ բացակայում են օրենսդրությամբ նախատեսված հիմքերը: Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝

1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ.

2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

3) որոնք կամ որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել ահաբեկչության ֆինանսավորման, երեխայի շահագործման կամ մարդկային թրաֆիքինգ ներառող հանցագործության, հանցավոր համագործակցություն ստեղծելու կամ դրան մասնակցելու, կաշառք ստանալու, կաշառք տալու կամ կաշառքի միջնորդության և օրենքով նախատեսված տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է.

4) որոնց վերաբերյալ հայտը ներկայացվելու օրվան նախորդող մեկ տարվա ընթացքում առկա է օրենքով սահմանված կարգով կայացված անբողոքարկելի վարչական ակտ՝ գնումների ոլորտում հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար.

5) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են Եվրասիական տնտեսական միությանն անդամակցող երկրների գնումների մասին օրենսդրության համաձայն հրապարակված գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում.

6) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում անձը կարող է ներառվել բացառապես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված դեպքերում, և մասնավորապես 6-րդ կետի «ա» ենթակետում թվարկված խախտումների դեպքում, այն է՝ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Գտնում ենք, որ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը պահանջված շտկումը չի կարողացել Կոմիտեին ներկայացնել ոչ իր մեղքով: Այսպես՝

Սույն կարծիքին կից ներկայացվող screenshot-երից հետևում է, որ 30.03.2020թ., ժամը 17:18-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակից Անահիտ Ասատրյանի կողմից Ընկերությանն է ուղարկվել էլեկտրոնային հաղորդագրություն հետևյալ բովանդակությամբ «Խնդրում եմ մինչև օրվա ավարտը կատարել շտկում, պատասխանել հեռախոսազանգերին և հետևել էլ հաղորդագրություններին»: Շտկում վերաբերում է մասնավորապես Ընկերության տնօրենի անձը հաստատող փաստաթղթի տեսակը նշելուն, որը Կոմիտեի կողմից պահանջվել է ներկայացնել:

Նույն օրը, ժամը 18:10-ին, ի պատասխան վերոնշյալ նամակի Ընկերության աշխատակիցը փորձել է համապատասխան շտկումը ուղարկել Կոմիտեի էլեկտրոնային փոստի միջոցով, սակայն նամակը տեխնիկական պատճառով հնարավոր չի եղել ուղարկել: Որպես պատճառ է նշվել, որ էլեկտրոնային փոստի ադմինիստրատորը սահմանել է ինչ-որ սահմանափակում: Նույն օրը, ժամը 18:33-ին, Ընկերության աշխատակիցը կրկին է փորձել ուղարկել համապատասխան շտկումը, ինչը նույնպես չի հաջողվել նույն պատճառաբանությամբ: Հատկանշական է, որ www.armeps.am կայքը բավականին ծանր և դժվարությամբ է աշխատելիս եղել, համապատասխան ծրագիրը պատշաճ արագությամբ չի գործարկվել, ինչը իր հերթին ևս պատճառ է հանդիսացել

Ընդ որում, հատկանշական է այն հանգամանքը, որ Կոմիտեի հետ գնման գործընթացին վերաբերող հաղորդակցությունը հնարավոր էր իրականացնել բացառապես էլեկտրոնային հաղորդակցության միջոցով՝ հաղորդագրություններ ուղարկելու եղանակով, և առկա չի եղել հեռախոսային կապի հնարավորություն, այսինքն, առկա չի եղել հեռասխոսահամար, որով հնարավոր կլիներ զանգել և կապ հաստատել Կոմիտեի համապատասխան աշխատակցի հետ:

Այսինքն, վերոգրյալ փաստերից հետևում է, որ Ընկերությունը փորձել է կատարել համապատասխան շտկումները, սակայն տեխնիկական, ոչ իրենից կախված պատճառներով այդ փորձը չի հաջողվել: Ուստի առավել քան ակնհայտ է, որ ստեղծված իրավիճակում բացակայում է Ընկերության մեղավորությունը հաշվի առներով նաև այն հանգամանքը, որ www.armeps.am կայքը բավականին ծանր և դժվարությամբ է աշխատելիս եղել, իսկ համապատասխան ծրագիրը պատշաճ կարգով և արագությամբ հնարավոր չի եղել գործարկել:

Ուշադրության է ենթակա նաև այն հանգամանքը, որ սկզբնական հայտում Ընկերության կողմից արդեն իսկ նշված է եղել Ընկերության տնօրենի նույնականացման քարտի համարը, նշված չի եղել ընդամենը անձը հաստատող փաստաթղթի տեսակը, տվյալ դեպքում «նույնականացման քարտ» բառը: Նշենք, որ «Անտարես» ՍՊ ընկերությունը բազմիցս է մասնակցել պետական գնման գործընթացների և ներկայացված հայտերում միշտ նշվել է միայն նույնականացման քարտի համարը և երբևէ չի նշվել «նույնականացման քարտ» բառը: Հետևաբար՝ ընդունելի չէ բացառապես ձևական նկատառումներից ելնելով նման ոչ էական բացթողնման պատճառով Ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ինչի հետևանքով Ընկերությունը երկու տարի ժամկետով կզրկվի առհասարակ որևէ գնման գործընթացին մասնակցելու իրավունքից, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ուստի գտնում ենք, որ Ընկերության նկատմամբ նախաձեռնված նշված գործընթացը իրավաչափ չէ և ենթակա է դադարեցման:»:

Ելնելով վերոգրյալից, Բողոքներ քննող անձին խնդրել են «Անտարես» ՍՊԸ ընկերությանը չներառել ցնումների ցործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

4. <u>ՍՑ-LO-2020/97 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով 18.03.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Անտարես» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 26.03.2020թ.-ի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ի իրական շահառուների մասին տեղեկատվության մեջ անձը հաստատող փաստաթղթի տեսակը լրացված չէ:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

27.03.2020թ.-ին (ուրբաթ) գնումների համակարգողը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Մասնակցին համակարգում գրանցված antares@antares.am էլ. փոստի հասցեին և հայտնել մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

30.03.2020թ.-ին, ժամը 17:18-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակից Անահիտ Ասատրյանի կողմից էլ. փոստի միջոցով Մասնակցի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում նշված toma@antares.am էլ. փոստի հասցեին է ուղարկվել ծանուցում, հետևյալ բովանդակությամբ՝ «Խնդրում եմ մինչև օրվա ավարտը կատարել շտկում, պատասխանել հեռախոսազանգերին և հետևել էլ. հաղորդագրություններին»:

Նույն օրը, ժամը 18:10-ին, Մասնակիցը համապատասխան շտկումը՝ Հավելված 1-ը, ուղարկել է Անահիտ Ասատրյանի էլ. փոստին:

postmaster@taxservice.am էլ. փոստից ստացված գրության համաձայն՝ Մասնակցի կողմից ուղարկված շտկման մասին գրությունը տեխնիկական պատճառով չի ուղարկվել (Delivery has failed to these recipients or groups):

Նույնաբովանդակ գրություն է ստացվել նաև Մասնակցի կողմից ժամը 18:33-ին շտկման մասին գրությունը կրկին ուղարկելու մասով:

Հանձնաժողովի 31.03.2020թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Անտարես» ՍՊԸ-ն շտկում չի ներկայացրել:

Նույն արձանագրության 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է մերժել «Անտարես» ՍՊԸ-ի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 03.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5019-2020 գրությամբ «Անտարես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

Հրավերի 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Հրավերի արդեն 8.18-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի միջոցով, իսկ մասնակցի կողմից՝ իր հայտում նշված էլեկտրոնային փոստից սույն հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկվելու միջոցով:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տպագրական աշխատանքների ձեռքբերման նպատակով 18.03.2020թ.-ին հայտարարված «ՀՀՊԵԿ-ԳՀԱՇՁԲ-20/14» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1-ի իրական շահառուների մասին տեղեկատվության մեջ անձը հաստատող փաստաթղթի տեսակը լրացված չէ:

Նույն արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել նշված անհամապատասխանությունները:

27.03.2020թ.-ին (ուրբաթ) գնումների համակարգողը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցել է Մասնակցին համակարգում գրանցված antares@antares.am էլ. փոստի հասցեին և հայտնել մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ:

30.03.2020թ.-ին, ժամը 17:18-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի աշխատակից Անահիտ Ասատրյանի կողմից էլ. փոստի միջոցով Մասնակցի՝ գնանշման հարցմանը մասնակցելու դիմումում նշված toma@antares.am էլ. փոստի հասցեին է ուղարկվել ծանուցում, հետևյալ բովանդակությամբ՝ «Խնդրում եմ մինչև օրվա ավարտը կատարել շտկում, պատասխանել հեռախոսազանգերին և հետևել էլ հաղորդագրություններին»:

Նույն օրը, ժամը 18:10-ին, Մասնակիցը համապատասխան շտկումը՝ Հավելված 1-ը, ուղարկել է Անահիտ Ասատրյանի էլ. փոստին:

postmaster@taxservice.am էլ. փոստից ստացված գրության համաձայն՝ Մասնակցի կողմից ուղարկված շտկման մասին գրությունը տեխնիկական պատճառով չի ուղարկվել (Delivery has failed to these recipients or groups):

Նույնաբովանդակ գրություն է ստացվել նաև Մասնակցի կողմից ժամը 18:33-ին շտկման մասին գրությունը կրկին ուղարկելու մասով:

Հանձնաժողովի 31.03.2020թ.-ի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Անտարես» ՍՊԸ-ն շտկում չի ներկայացրել:

Նույն արձանագրության 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը, որոշել է մերժել «Անտարես» ՍՊԸ-ի հայտը:

Ամբողջացնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ եթե գնանշման հարցումն իրականացվում է էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով, ապա Հանձնաժողովի և (կամ) պատվիրատուի կողմից էլեկտրոնային ծանուցումներն ուղարկվում են համակարգի՝ www.armeps.am միջոցով՝ Մասնակցի Armeps համակարգում գրանցված էլեկտրոնային փաստի հասցեին, իսկ մասնակցի կողմից Հանձնաժողովին և (կամ) պատվիրատուին ուղղված գրությունները

(ծանուցումները) ուղարկվում են՝ Մասնակցի հայտում նշված էլեկտրոնային փոստից՝ հրավերում նշված՝ հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Անտարես» ՍՊԸ-ի կողմից ձեռնարկվել են իրենից կախված հնարավոր բոլոր միջոցները՝ ուղղված Հավելված 1-ը շտկելու և Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում ժամանակին ներկայացնելուն, սակայն իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել դրանք հասցնել տրամաբանական ավարտին, որպիսի պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 03.04.2020թ.-ի թիվ 26/26-1/5019-2020 գրությամբ «Անտարես» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/97 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**